

# ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ԿՈՄՊՈՍԵ



աղբից դեպի այգի



# Բուվանդակություն

1. Ինչ է կոմպոստը.....	1
2. Ինչ է կոմպոստացումը.....	1
3. Կոմպոստի հնարավորությունները.....	2
4. Կոմպոստացման անհրաժեշտության պատճառները.....	3
5. Ինչպես է կոմպոստը օգնում հողին.....	4
6. Որն է կոմպոստացման օգտակարությունը.....	6
7. Ինչքան ժամանակ է անհրաժեշտ կոմպոստ ստանալու համար.....	7
8. Կոմպոստացման համար անհրաժեշտ օրգանական նյութերը.....	8
9. Կոմպոստացման գործընթացը.....	9
10. Տարածք՝ կոմպոստացման համար.....	11
11. Կոմպոստացման տարբեր տեսակներ.....	12
12. Կոմպոստացում առանց ավելորդ անհանգստության.....	14
13. Կարելի է կոմպոստացնել նաև էկոսամի արգասիքը.....	14
14. Կոմպոստի կույտի ստեղծում 3 ամսում.....	15
15. Կոմպոստի կենսաանվտանգությունը.....	16
16. Կոմպոստի «բերքահավաքը».....	19
17. Կոմպոստի նպատակային օգտագործումը.....	20
18. Կոմպոստացում որդերի օգնությամբ՝ կենսահումուսի արտադրություն.....	21
19. Կենսահումուսի արդյունավետությունը.....	23
20. Կենսահումուսի ստացման գործընթացի կազմակերպումը.....	24
21. Կենսահումուսի օգտագործումը.....	25
22. Օգտագործված գրականություն.....	26
	27

## Ինչ է կոմպոստը

Կոմպոստն օրգանական պարարտանյութ է, որն առաջանում է միկրոօրգանիզմների ազդեցության տակ օրգանական թափոնների քայլայման արդյունքում:  
Կոմպոստացման արդյունքում օրգանական նյութերում ավելանում է բույսերի համար մատչելի սննդատարրերի (N, P, K և այլն) քանակը: Կոմպոստացման վերջնական արդյունքը նման է հողի կամ հումուսի, որի շնորհիվ հողն ավելի է «առողջանում»:



## Ինչ է կոմպոստացումը

Կոմպոստացումը բնական գործընթաց է, որի ընթացքում քայլայվում են օրգանական նյութերը: Կոմպոստի պատրաստումը բնական գործընթացի վերահսկվող կամ կառավարվող տարբերակն է: Կոմպոստ ստացվում է ավելի արագ, եթե գործողությունները կենտրոնացվում են մեկ տեղում և, միևնույն ժամանակ, սննդամբերքը, օդը և ջուրը գտնվում են հավասարակշիռ վիճակում:

## Կոմպոստի հնարավորությունները

1. Կոմպոստն արմատային շերտում ստեղծում է բույսերի համար մատչելի սննդի տևական պաշար

2. Նպաստում է հողի կենդանացմանը և արագացնում է հողի ինքնապարարտացման գործընթացը

3. Բարձրացնում է բույսերի դիմադրողականությունը վնասատուների և հիվանդությունների նկատմամբ

4. Պարզեցնում է լիարժեք, համեղ և լավ պահպանվող մթերքներ



## Կոմպոստացման անհրաժեշտության պատճառները

- Կոմպոստացման շնորհիվ **ոչնչանում են** պաթոգեն/հիվանդածին մանրէները
- Կոմպոստացման հողավոր է **ողջ տարվա ընթացքում**
- **Չկա նոր սարքավորում** կիրառելու անհրաժեշտություն
- Կոմպոստը համեմատաբար **գերծ է վատ հոտերից**
- Կոմպոստացումը **քիչ աշխատատար է**
- Կոմպոստացումը **խնայում է ծախսերը**



## Ինչպես է կոմպոստը օգնում հողին

Կոմպոստն իր ազդեցությամբ նման է վիտամինների խմբի: Այն օգտակար է էրոզիայի դեմ պայքարելու գործում, նպաստում է հողի բերրիությանը և խթանում է արմատների առողջ զարգացումը:

Կոմպոստը բարելավում է հողի

կառուցվածքը և ուժեղացնում ջուրն իր մեջ պահելու հողի կարողությունը, հետևաբար, հողը շատ ջրելու կարիք չի լինում: Բացի այդ, կոմպոստի շնորհիվ հողը պնդանում է, որի արդյունքում հողի մշակումն ավելի է հեշտանում և արմատային համակարգերն ավելի լավ են աճում:

Դասուն կոմպոստում բույսերի սնուցման տարրերը գտնվում են թեև կապված, բայց բույսերի կողմից յուրացման համար մատչելի վիճակում: Անձրևների ժամանակ դրանք չեն լվացվում: Կոմպոստը արմատային գոտու համար սննդի տևական պաշար է երաշխավորում:

Կոմպոստն արժեքավոր է ոչ միայն միկրոօրգանիզմների և բույսերի համար որպես սնունդ ծառայելու, այլև հողում բարենպաստ միկրոֆլորայի ստեղծման տեսակետից: Կոմպոստում ընթացող գործընթացները նույնն են, ինչ հողում, միկրոֆլորան իր կազմությամբ մոտ է հողի միկրոֆլորայի



բաղադրությանը: Կոմպոստը հողում ներմուծելով, մենք ոչ միայն պարարտացնում, այլև կենդանացնում ենք հողը:

Կոմպոստով պարարտացված բույսերը ծեռք են բերում վնասատուների և հիվանդությունների նկատմամբ բարձր դիմացկունություն: Դա մասամբ բացատրվում է նրանով, որ կոմպոստում ապրող սննդերն արտադրում են

հակարիտիկներ, որոնք ճնշում են հողում գտնվող հիվանդածին մանրէների

ակտիվությունը: Կոմպոստում ապրում են նաև գիշատիչ սննդեր, որոնք ունեն երկար, կաշուն թելեր: Այդ թելերը, ծակել - անցնելով կոմպոստի միջով, թակարդի դեր են կատարում՝ նեմատոդներին (կլոր որդեր)

որսալու համար: Թելերն օդակներ են գոյացնում, որոնք բռնում են օդակում հայտնված նեմատոդին, խժում են վերջինիս և մարսում: Ահա թե ինչու է կոմպոստը համարվում նեմատոդների դեմ պայքարի լավագույն միջոցը: Նեմատոդները լինում են տարրեր տեսակի: Դրանք լինում են բուսական-թունավոր, որոնք մեր թշնամիներն են, և գիշատիչ, որոնք մեր բարեկամներն են: Գիշատիչներն որսում են իրենց

ազգակիցներին՝ բուսական-թունավոր նեմատոդներին և, չնայած խապառ չեն ոչնչացնում դրանց, համենայնդեպս, զգալի չափով կրծատում են դրանց քանակը: Կոմպոստով պարարտացված մարգերում պետք չէ վախճանալ արմատներին նեմատոդների հասցրած ուժեղ վնասից:



## Որն է կոմպոստացման օգտակարությունը

### Կոմպոստացումը

հնարավորություն է տալիս թփերի, խոտերի կտորտանքները, մրգերի ու բանջարեղենի մնացորդները վերածել հողաբարելավման արժեքավոր միջոցի՝ անմիջապես ձեր բակում։ Այդպես դուք խնայում եք ձեր գումարը, նվազեցնում աղբի/թափոնների քանակը և բարելավում շրջակա միջավայրը։ Կոմպոստացումը ճիշտ վերամշակման տարբերակ է։



### Ինչքան ժամանակ է անհրաժեշտ կոմպոստանալու համար

Կոմպոստի մեկ խմբաքանակ ստանալու համար պահանջվում է 3-9 ամիս՝ կախված վերցրած նյութերի խառնուրդից, կույտը խառնելու հաճախականությունից, կույտի բարձրությունից և խոնավության աստիճանից։



## Կոմպոստացման համար անհրաժեշտ օրգանական նյութերը

Կոմպոստացման համար հարմար նյութեր են ածխածնային նյութերը (դարչնագույն և չոր) կամ ազոտային նյութերը (կանաչ և խոնավ):

### Կոմպոստացմել կարելի է՝

#### Ազոտային /N/, կանաչ

- թարմ խոտի կտորտանքներ
- հում բանջարեղենի, մրգերի և հացահատիկային մշակաբույսերի մնացորդներ
- սուրճի հատիկներ, նստվածք
- թեյի մնացորդ
- ծաղիկների մնացորդներ
- խոտի կտորտանքներ
- կանաչ տերևներ
- մոլախոտեր
- բուսակեր կենդանիների հասունացած արտաթրանք /գոմաղբ, թռչնաղբ/
- թարմ գոմաղբ, թռչնաղբ՝ քիչ քանակություններով
- երիտասարդ մոլախոտեր



## Ածխածնային /C/, դարչնագույն

- չներկված, մանրացված բնափայտ
- ծղոտ
- մաքուր թուղթ՝ առանց թանաքի
- բնափայտի մոխիր
- ճմրթած կամ կտրտած բնական թուղթ՝ թերթ, անձեռոցիկ, տուփեր, փաթեթներ, ստվարաթուղթ
- մանրացված բնական թելեր
- բույսերի ցողուններ
- ծվի կճեպներ
- ծառերի և թփերի հատած, փոքր շիվեր
- մանրացված ճյուղեր, բնափայտ, արմատներ
- նախորդ տարվա կիսափտած տերևներ
- փայտյա տաշեղներ, փայտի թեփ
- հին ծաղկամանների հող
- այգու այլ օրգանական թափոններ
- չոր տերևներ
- մազեր



## Զի կարելի կոմպոստանել՝


- մսի կամ ձկան մնացորդներ, ուսկորներ
- կաթնամթերք
- ճարպ, բուսական յուղ կամ յուղոտ սննդամթերք
- սալաթի համեմունքներ/սոուս
- հիվանդ բույսեր
- սերմերով մոլախոտեր, հիվանդածին մոլախոտեր
- տնային կենդանիների (շուն, կատու և այլն) լեշ, մորթի, արտաթորանք
- մշտադալար բույսերի կտորտանքներ
- վնասատուներով և հիվանդություններով ախտահարված թափոններ
- բուսական թափոններ՝ հերթիցիներով մշակվելուց հետո (եթե հերթիցին արտադրողի կողմից չի նշված հակառակը)
- չկտրտած փայտի կտորներ
- քիմիական նյութերով մշակված փայտի կամ այլ նյութերի թափոններ



## Կոմպոստացման գործընթացը

Կոմպոստացումը կատարվում է օրգանական նյութերում գտնվող բազմազան օրգանիզմների օգնությամբ: Դրանք աշխատում են միասին՝ սնվելով կույտի նյութերով, նաև՝ մեկը մյուսով, նյութերը քայլայելու համար: Կոմպոստի ստացման գործում մեծ է բակտերիաների դերը: Դետագայում բակտերիաներին միանում են սնկերը և պրոտոզոաները: Որդերը նույնպես մասնակցում են կոմպոստացման գործընթացին:

**Ինչպես է կատարվում կոմպոստացումը**  
Ինչ է տեղի ունենում կոմպոստի արկղում



## Տարածք՝ կոմպոստացման համար

Բակում կոմպոստացման համար տարածքը պետք է ընտրել բարձր և չոր տեղում, և ոչ երբեք ցածր վայրում, ուր հավաքվում են անձրևաջրերը: Դեպի կույտը տանող ճանապարհը պետք է լինի սալապատ և այնպիսի լայնության, որ սայլակը հեշտ լինի տեղաշարժել:

Որպեսզի կոմպոստը արևի տակ շատ չչորանա, կոմպոստի համար առանձնացված վայրի շուրջը տնկում են ոչ բարձր ծառեր ու թփեր, կամ ընտրում են համապատասխան տեղ: Հավագույն տարրերակը բակում կոմպոստի 3 կույտ ունենալն է՝ առաջինը նոր պատրաստված կույտն է, երկրորդը՝ հասունացման փուլում գտնվող, իսկ երրորդը՝ օգտագործման համար պատրաստ կույտը:

Կոմպոստացվող նյութերը կարելի է պահել կույտի ձևով կամ դրա համար օգտագործել տարրեր

տարրողություններ: Վերջինիս դեպքում կարելոր է, որպեսզի այդ տարածք հատակ չընենա: Կոմպոստի կույտը պետք է գտնվի հողի վրա, և ոչ երբեք՝ ասֆալտապատ կամ ցեմենտապատ մակերեսին: Եթե կույտը պատրաստեք միշտ միևնույն տեղում, ապա



1-2 տարի անց, կույտի տակի հողը կդառնա կոմպոստացման համար անհրաժեշտ օրգանիզմների բնակատեղի: Կույտի լայնությունը 1,5 մ է,

բարձրությունը՝ 1,2-1,5 մ, իսկ երկարությունը՝ ցանկացած չափի:

Եթե կոմպոստի ծավալն այնքան էլ մեծ չէ, ապա կարելի է օգտագործել տարրեր

տարրողություններ: Նյութը, որից պատրաստված են այդ տարաները, չպետք է ենթարկվի կորոզիայի և նեխման: Այն պետք է ապահովի օդի մուտքը կոմպոստացվող նյութի մեջ:

Ամենապարզ լուծումը՝ միրգ տեղափոխելու համար նախատեսված, փայտե, ոչ խիտ դասավորված տախտակներից պատրաստված արկղն է, որի մակերեսը

պետք է լինի  $1^2$  մ, իսկ բարձրությունը՝ 1,5 մ-ից ոչ ավել: Տախտակները նախապես ախտահանում են հականեխիչ նյութով: Արկղի առջևի մասը դարձնում են հանովի, որպեսզի կոմպոստը հեշտությամբ դուրս բերվի: Այդպիսի արկղ կարելի է պատրաստել նաև աշուսից կամ շիֆերից:

Պետք է իիշել, որ այն դեպքերում, երբ կոմպոստացվող նյութերը չեն դիպչում հողին, այդպիսի կույտում որպես «խմորիչ» ավելացնում են որոշ քանակությամբ հասուն կոմպոստ:





Կոմպոստացումը մի գործընթաց է, որը հնարավորություն է տալիս սեփական հողատարածքում կազմակերպել լավագույն որակի, էկոլոգիապես մաքուր և ամենամատչելի պարարտանյութի արտադրություն:

## Կոմպոստացման տարրեր տեսակներ

Գոյություն չունի կոմպոստացման եզակի «ճիշտ» մեթոդ: Կան որոշ տարրերակներ, որոնք իհմնված են աերոր պայմաններում քայլայման սկզբունքների վրա: Փորձ ձեռք բերելուն զուգահեռ՝ կարող եք ձևափոխել ձեր կիրառական մեթոդը: Օգտագործեք ձեր ապրելակերպին հարմար պարզ ու հարմարավետ մեթոդ:

## Կոմպոստացում՝ առանց ավելորդ անհանգստության

Այգու կտորտանքները կարելի է կոմպոստացման և առանձին, և մրգերի ու բանջարեղենի մնացորդներին խառնելով: Դրա համար պահանջվում է այգում մի փոքր տարածք (մոտ 1մ x 1մ)՝ արևի տակ կամ ստվերում: Կոմպոստը կարելի է պահել բաց վիճակում կամ մետաղալարե ցանցազամբյուղում: Ուղղակի պետք է ավելացնել կտորտած դաշնագույն և կանաչ զանգվածներ: Թարմ, խոնավ կանաչ զանգվածը, օրինակ, մրգերի, բանջարեղենի կամ խոտի կտորտանքները չոր նյութին ավելացնելիս, աշխատեք չիրապուրել վնասատուներին: 4-12 ամիս անց, կույտի հատակին կունենաք հողի տեսքով կոմպոստ:



## Կարելի է կոմպոստացնել նաև էկոսանի արգասիքը

Էկոսան արտաքնոցը մեզը կղանքից բաժանո՞վ համակարգ է, որի շնորհիվ դրանք հավաքվում են առանձին տարամերում և ենթարկվում:

Համապատասխան մշակման:

Մեզը հավաքվում և պահպում է ցիստերնում: Կղանքը

հավաքվում է խցիկում կամ տարայում և անմիջապես ծածկվում որևէ չոր նյութով (օր.՝ մոխիր, կրի և հողի խառնուրդ, փայտի թեփի):

Առնվազն մեկ տարի պահելուց հետո, կղանքը

կոմպոստացնում են, որի շնորհիվ ոչնչանում են մարդերը:



## Կոմպոստի պատրաստում 3 ամսում

Միկրոօրգանիզմները կոմպոստի կույտում կատարում են աշխատանքի մեջ մասը: Դրանց բազմացման համար անհրաժեշտ է հավասարակշռված սնունդ՝ ածխածնային և ազոտային նյութերի 3:1 հարաբերությամբ: Այսպիսի հարաբերությունն ապահովում է արդյունավետ կոմպոստացում: Խնդիրն այն է, որ ածխածնային նյութերն ավելի մեծ քանակությամբ մատչելի են աշնանը և տերևակալման շրջանում:

Տերևաթափի ժամանակ, ծառերի տերևները խառնեք խոտի կտորտանքների, մրգերի ու բանջարեղենի մնացորդների հետ: Տարածքի մակերեսը մեծացնելու համար, խորհուրդ է տրվում տերևները հավաքել փողխով /քահով/, որի օգնությամբ նյութը կխառնվի, կփոքրանան նյութերի չափսերը և կունենաք ածխածնի և ազոտի 3:1 հարաբերությունը: Հիմնական նպատակը այս հարաբերությանը մոտ հարաբերություն ապահովելն է:

Կոմպոստի կույտին մրգերի ու բանջարեղենի

մնացորդներ ավելացնելիս, կույտը փորեք կենտրոնում, լցրեք այդ նյութերը և ծածկեք: Այս կերպ կկանխեք վնասատուների՝ մկների ու առնետների, մուտքը: Կոմպոստը կարելի է պահել բաց վիճակում կամ մետաղալարե ցանցազամբյուղում:



Մկների ու առնետների առկայությունը կույտում սովորաբար վկայում է այն մասին, որ մրգերի ու բանջարեղենի մնացորդները մեծ քանակությամբ եք ավելացրել կույտին: Այդ դեպքում, դադարեցրեք այդպիսի նյութերի ավելացումը: Դրա փոխարեն կույտին խառնեք թարմ կանաչ նյութ՝ կույտի ներսում ջերմությունն ավելացնելու նպատակով: Կրծողների վերանալուց հետո, կարող եք դարձյալ ավելացնել մրգերի ու բանջարեղենի մնացորդներ, միայն թե՝ քիչ քանակությամբ:

### ■ Կույտի ջրումը

Կույտի ներսում ցանկալի է ապահովել 40 % խոնավություն: Զուրը սկսեք ավելացնել կույտի պատրաստման հենց սկզբից: Զուրը պետք է հավասարաչափ բաշխել ողջ կույտով մեկ: Խոնավությունը կարելի է ստուգել հետևյալ կերպ: Վերցնում եք մի բուր կոմպոստ և սեղմում ափի մեջ: Չեղքի ափը բացելիս՝ նյութը պետք է դիպչի ափին, իսկ մատների արանքից պետք է մեկ-երկու կաթիլ ջուր հոսի: Եթե նյութը չոր է, և մատների արանքում ջուր չկա, նշանակում է, պետք է կույտին ավելացնել



ջուր: Եթե կույտը հագեցած է խոնավությամբ, մոտակա շաբաթվա ընթացքում խառնեք այն մի քանի անգամ:

## ■ Օդ

Ամեն անգամ կոմպոստի կույտը խառնելիս, կույտում կատարվում է օդափոխանակություն: Դիշեք, որ քայքայող օրգանիզմների գոյատևման համար, անհրաժեշտ է թթվածին: Եթե կույտը չխառնեք, այն կդառնա անաերոք, և կոմպոստացում տեղի չի ունենա: Խորհուրդ է տրվում կույտը խառնել շաբաթական կամ երկու շաբաթը մեկ անգամ: Գարնանը, ամռանը և վաղ աշնանը շաբաթական մեկ անգամ խառնելը բավարար է:

## ■ Ձերմությունը

Կոմպոստը քայքայող ամենաօգտակար բակտերիաները բազմանում են 43-63°C ջերմաստիճանում: Որքան ջերմաստիճանը բարձր է կույտի ներսում, այնքան ավելի արագ է կատարվում կոմպոստացումը: Ածխածնի և ազոտի ճիշտ հարաբերության պահպանումը, համարժեք խոնավության ապահովումը և օդափոխանակությունը կնպաստեն կույտի ջերմաստիճանի բարձրացմանը մի քանի օրվա ընթացքում:



## Կոմպոստի կենսաանվտանգությունը

Ախտանիշ	Խնդիր	Լուծում
Կույտից վատ հոտ է գալիս	<ul style="list-style-type: none"><li>Կույտը չափազանց խոնավ է</li><li>Կույտում չափից ավել ազոտային նյութեր կան</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>Խառնել կույտը</li><li>Խուսափել հաճախ ջրելուց և խառնել կույտը՝ չորացնելու նպատակով</li><li>Կույտին ավելացնել չոր տերևներ կամ ածխածնով հարուստ նյութեր</li></ul>
Կույտը չի տաքանում	<ul style="list-style-type: none"><li>Զրի քանակը բավարար չէ</li><li>Կույտը շատ փոքր է</li><li>Կույտում ազոտային նյութերը քիչ են</li><li>Նյութերի չափսերը շատ մեծ են</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>Ավելացնել ջուր</li><li>Ճավաքել ավելի շատ նյութ և պատրաստել 1-1,5 մ բարձրության կույտ</li><li>Կույտին խառնել բարմ, ազոտով հարուստ նյութեր, ինչպես օրինակ՝ կանաչ խոտ, մրգերի ու բանջարեղենի մնացորդներ</li><li>Նյութերի չափսերը փոքրացնելու նպատակով՝ դրանք կտրատել</li></ul>
Կույտը հրապուրում է ճանճերին, կրծողներին կամ այլ վնասատուների	<ul style="list-style-type: none"><li>Կույտը հարուստ է սպիտակուցներով, ճարպոտ է կամ քաղցր</li><li>Սնունդը ծածկված չէ</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>Կոմպոստի կույտում չպետք է լինեն մսի մնացորդներ, ոսկորներ, յուղոտ սննդամթերքներ, կաթնամթերք</li><li>Մրգերի ու բանջարեղենի մնացորդները մնացնել կույտում՝ 18-36 սմ խորությամբ</li></ul>

## Կոմպոստի «բերքահավաքը»

Կոմպոստացված նյութը չպետք է նման լինի այն նյութերին, որոնք դուք նախապես ավելացրել եք կոմպոստի տարայում: Այն պետք է ունենա հողի կամ հունուսի տեսք: Երբ ամբողջ կույտը փոխակերպվի այսպիսի նյութի, նշանակում է՝ եկել է կոմպոստի «բերքահավաքի» ժամանակը:

«Բերքահավաքի» համար խորհուրդ է տրվում այն փոել բրեգենտի վրա և թողնել, որ չորանա: Չորանալուց հետո, կոմպոստն ավելի առողջ է, այգում շաղ տալը՝ հեշտ:

Կոմպոստը կարելի է նաև անցկացնել ցանցի միջով: Չնայված խոշոր կտորները կարելի է կրկին խառնել կոմպոստի կույտին՝ լրացուցիչ կոմպոստացման համար:



## Կոմպոստի նպատակային օգտագործումը

### Յողի որակի բարելավիչ

Տարին առնվազն մեկ անգամ պետք է մարգերում և թմբերում ներմուծել 2,5-7,5 սմ հաստության շերտով հասուն կոմպոստ:

### Ցանքածածկ /մուլչ/

Խիտ ծառատուների դեպքում, բույսերի միջև լցոնեք 2,5-7,5 սմ հաստության կոմպոստի շերտ: Մոլախոտերի դեմ պայքարելու համար, բույերի շուրջը լցոնեք 10,5-15 սմ հաստության կոմպոստի շերտ:

Ծառերի բների շուրջը մուլչապատելու համար, նախ ծառի տակից խոտերը հեռացրեք բնից հնարավորինս հեռու: Շետք 2,5-5 սմ հաստության շերտով կոմպոստը փոեք բնի շուրջ, սակայն ուշադիր եղեք, որպեսզի բնին անմիջապես մոտ տարածը լինի բաց և ազատ, որպեսզի ծառի կեղևը չնեխի կամ չախտահարվի որևէ հիվանդությամբ:

### Յողախառնուրդ

Սենյակային բույսերի ծաղկամանների համար արտակարգ հողախառնուրդ կարելի է պատրաստել՝ խառնելով 1բաժին հող, 1 բաժին ավազ և մեկ բաժին 0,5-0,7 մմ մաղով անցկացրած կոմպոստ: Տարին 2 անգամ ավելացրեք 2,5 սմ հաստության կոմպոստի շերտ՝ նախապես մի քիչ հող հեռացնելով վերին շերտից:



Բույսը երբեք չի կարելի դնել անմիջապես  
կոմպոստում:

Բույսի արմատային համակարգը, նորմալ  
զարգացման համար, կարիք ունի ավելի կոշտ  
մասնիկների, օրինակ, ավազի և հողի:

Ծառերի կամ թփերի տնկումից առաջ, կոմպոստը  
խառնեք փորած փոսի հողի հետ՝ վերցնելով 1 մաս  
կոմպոստ և 2 մաս հող: Այս խառնուրդը լցրեք փոսի  
հատակը և ջրեք:



Դիշեցնենք նաև, որ ընդհանրապես, կոմպոստի  
կույտը երբեք չպետք է հենել ծառերի բներին կամ բույսերի ցողուններին:

### Կոմպոստ՝ թեյի տեսքով կամ կենսահեղուկ

Այս, դուք չեք սխալվում: Թեյ կարելի է պատրաստել նաև կոմպոստից: Դրա  
համար անհրաժեշտ է վերցնել 2 կգ կոմպոստ և լավ խառնել նախօրոք  
եռացրած և սառեցրած 10 լ ջրին, թողնել 8-12 ժամ, ապա քամել և  
օգտագործել արտարմատային սնուցման համար: Կոմպոստի թեյը կարելի է  
օգտագործել նաև սերմերի ծլունակությունը բարձրացնելու համար:

Այդպիսի թեյի նոսր շիթով կարող եք ցողել սենյակային բույսերի հողը:

Կոմպոստի փոխարեն կարելի է օգտագործել կենսահումուս և ստանալ  
կենսահեղուկ, որը նույնպես կարող եք օգտագործել նույն  
նպատակներով:



### Կոմպոստացում որդերի օգնությամբ՝ կենսահումուսի արտադրություն

Կոմպոստի մեկ այլ տարբերակ է վերմիկոմպոստը,  
որի ստացման համար օգտագործում են

կալիֆոռնյան կարմիր որդեր:

Որդերի աճեցմամբ պատրաստում են շատ  
արժեքավոր օրգանական պարարտանյութ, որը  
ստացել է «կենսահումուս» անվանումը:

Կենսահումուսը էկոլոգիապես մաքուր,  
կենսաբանորեն ակտիվ օրգանական

պարարտանյութ է, որն իրենից ներկայացնում է  
կալիֆոռնյան կարմիր որդերի կողմից

վերամշակված գոմաղբ և օրգանական թափոններ՝  
արտաքրանքի կամ կոպրոլիտի ձևով: Այն փխրուն,  
հաճելի բույրով, սևահողաննան նյութ է:

Իր բակտերիալ ֆլորայով գերազանցում է գոմաղբին, իսկ հիմնական  
սննդատարրերի պարունակությամբ 1 տ կենսահումուսը համարժեք է 7-8 տ  
գոմաղբին:

Գոմաղբի 1 տոննան որդերի միջոցով վերափոխվում է 600 կգ կենսահումուսի,  
իսկ 400 կգ-ը՝ որդերի մարմնի 100 կգ կենսազանգվածի, որն իր հերթին  
սպիտակուցային կեր է թռչունների, խոզերի, ձկների համար: Պարզվել է, որ  
1% որդերի կենսազանգվածը, թռչունների կերի ռացիոնում ավելացնելիս,  
ձվատվությունն ավելանում է 20%, իսկ անասունների սննդի



ռացիոնում 0,5 կգ որդերի թարմ կենսազանգված ավելացնելիս,  
կարնատվությունը բարձրանում է 22%-ով: Ի դեպ, պետք է նշել, որ որդերի  
կենսազանգվածում պրոտեինի պարունակությունը 68-82% է:

## Կենսահումուսի արդյունավետությունը

Կենսահումուսն արագ վերականգնում է հողի բնական բերրիությունը, հողում կապում է ծանր մետաղները և ռադիոնուկլիդները, բույսերին թույլ չի տալիս կուտակել նիտրատներ, արագացնում է սերմերի ծլումը, բույսերի աճը, ինչպես նաև զգալիորեն բարձրացնում է բույսերի բերքատվությունը (հացահատիկի բերքը ավելացնում է 30-40%, կարտոֆիլինը՝ 30-70%, բանջարեղենինը՝ 35-70%-ով), լավացնում է դրանց համային հատկանիշները:



Գիտե՞ք արդյոք,

որ տնային կոմպոստացումը, հավանաբար, միակ ամենաարդյունավետ միջոցառումն է, որը դուք կարող եք իրականացնել՝ երկրագնդին օգնելու համար:

Կենսահումուսը բարձրացնում է հիվանդությունների նկատմամբ բույսերի դիմացկունությունը և նպաստում պտուղներում, բանջարեղենում C վիտամինի ավելացմանը:

## Կենսահումուսի ստացման գործընթացի կազմակերպումը

Նախօրոք առանձնացված տարածքի վրա (լայնությունը 1,0-2,0 մ, երկարությունը՝ ըստ գոմաղբի քանակի) պետք է փուել 5-6 սմ հաստության ծղոտ, ծղոտի վրա լցնել 30-60 սմ հաստության, 5-6 ամիս հնության գոմաղը: Ցանկալի է, որպեսզի տարածքի հատակը ծածկված լինի բետոնով կամ հեռացվի հողի փիսրուն շերտը: Նշված եղանակով պատրաստի զանգվածի վրա լցնել որդեր, կույտոր ծածկել ծղոտով կամ չորացած տերևներով: 1 տ սուբստրատի համար անհրաժեշտ է 2000 որդ: 1 տ գոմաղբի արագ վերամշակման համար պահանջվում է 6000 հասուն որդ: Գոմաղբը պետք է պարբերաբար խոնավեցնել (70-80%): Որդերի ակտիվ գործունեությունը սկսվում է հատակից և բարձրանում է վեր: Կենսահումուսից որդերը կարելի է անջատել՝ հարթակի կույտի երկարությանը զուգահեռ 30-40 սմ հաստության թարմ խառնուրդ լցնելով, որի մեջ (3-5 օրում) կը քաշվեն որդերը: Կարմիր որդերի կյանքի նորմալ պայմաններն ապահովվում են դրանց մարմնի ջերմաստիճանին մոտ ( $19^{\circ}\text{C}$ ) ջերմաստիճանի դեպքում: Կարմիր որդը վախենում է լույսից, իսկ ուլտրամանուշակագույն ճառագայթները վերջինիս համար մահացու են: Ուստի լույսը չպետք է անմիջապես ազդի ապրելավայրի վրա: Ինչպես կույտերում, այնպես էլ արկղերում



ստացված կենսահումուսն անհրաժեշտ է մաղել 2 մմ անցքեր ունեցող մաղով և օգտագործել՝ որպես օրգանական պարարտանյութ:

## Կենսահումուսի օգտագործումը

Մեկ հեկտար հողը կենսահումուսով պարարտացնելու համար, անհրաժեշտ է 3,5-4 տ կենսահումուս:

Անկենդան հողը վերակենդանացնելու համար, մեկ հեկտարին անհրաժեշտ է 4,0-4,5 տ կենսահումուս: Գերհագեցնել հողը կենսահումուսով անհնար է:

Ինչքան շատ՝ այնքան լավ:

Սածիլների աճեցման համար, լավ արդյունք է տալիս 3 մաս հողի և 1 մաս կենսահումուսի խառնուրդը: Սածիլի տնկման ժամանակ բնի մեջ լցնել 1-2 բուռ կենսահումուս:

Կարտոֆիլը շատ զգայուն է կենսահումուսի նկատմամբ, ցանկալի է յուրաքանչյուր պալարի տակ լցնել մինչև 100 գ կենսահումուս:

Վարունգի, պոմիդորի, կաղամբի սածիլումից հետո, ցանկալի է մուլչապատել 1-2 սմ կենսահումուսի շերտով: Ոռոգման ընթացքում հումուսը կհասնի արմատներին:

Ելակը 7-10 օր շուտ կծաղկի և կհասունանա, եթե մարգերը մուլչապատվեն 1-2 սմ կենսահումուսի շերտով:

Եթե յուրաքանչյուր տարի ծառերի բների շուրջը լցնենք 2-3 սմ հաստությամբ կենսահումուսի շերտ, ապա կուժեղանա պտղաբերությունը, իսկ պտղուղները կլինեն խոշոր, գեղեցիկ և համեղ: Տնկիների տակ կարելի է լցնել 4-5 կգ, պտղատու ծառերի տակ՝ 10 կգ, կանաչիների  $1\text{m}^2$  մակերեսին՝ 500 գրամ կենսահումուս:

**Մաղթում ենք հաջողություն կուտուսի եվ կենսահումուսի ստացման գործում և համոզված ենք, որ ձեր պատրաստակամության, վճռականության ու գիտելիքների շնորհիվ՝ հաջողությունն ապահովված է:**



Օգտագործված գրականություն

1. Է.Ս. Ջայրապետյան, Ա.Վ. Շիրիմյան, «Ագրոէկոլոգիա», Երևան, 2003
2. Վ. Ավագյան, Վ. Ջայկագյան, «Կենսահումուսի արտադրությունը և կիրառությունը», Երևան, 1998
3. Հ.Մ. Ժիրմունսկայ, “Умный компост”, Москва - Санкт-Петербург, “Диля”, 2006.
4. Regional Recycling Group (RRG), “Regional Recycling Backyard Composting Guide”.
5. Metro, “Keep Nature in Neighborhoods”.

This publication was made possible  
by the financial support of the Dutch  
Ministry of Foreign Affairs through  
Women in Europe for a Common  
Future (WECF).

Սույն հրատարակությունն  
իրականացվել է Հողանդիայի  
արտաքին գործերի  
նախարարության ֆինանսական  
աջակցության շնորհիկ՝ «Եվրոպայի  
կանայք՝ հանուն ընդհանուր  
ապագայ» (WECF) միջազգային  
կազմակերպության միջոցով:



Women in Europe  
for a Common Future  
**WECF**  
[www.wecf.eu](http://www.wecf.eu)



Armenian Women for  
Health and Healthy  
Environment  
**AWHHE**  
[www.awhhe.am](http://www.awhhe.am)

Դայ կանայք հանուն առողջության  
և առողջ շրջակա միջավայրի ՀԿ  
0019, ՀՀ, ք. Երևան  
Բաղրամյան պող. 24Դ,  
սենյակ 609  
Հեռ. (+374-10)-52 36 04  
E-mail: [office.awhhe.am](mailto:office.awhhe.am)  
URL: [www.awhhe.am](http://www.awhhe.am)